

«ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՀԱՅԵՐԵՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Հայկական իրականության մեջ անտիկ աշխարհի նշանավոր դեմքերից մեկի՝ Աղեքսանդր Մակեդոնացու կյանքի և ռազմաքաղաքական տաղանդի նկատմամբ հետաքրքրությունը ունեցել է իր պատմական հիմքերը: Երկար ժամանակ գտնվելով հելլենիստական մշակույթի ոլորտում, իսկ հետագայում զրկված լինելով պետականությունից և քաղաքական անկախությունից, ենթարկվելով օտար նվաճողների անընդմեջ ասպատակություններին, հայ ժողովուրդը հարյուրամյակներ շարունակ իր միտքն ու հոգին կրթել է նաև Աղեքսանդր Մեծի առասպելական կերպարի հերոսական գծերով՝ նրա մեջ տեսնելով պետական-քաղաքական գործչի, երազելի միապետի, գիտության և արվեստների հովանավորի անհրաժեշտ բոլոր հատկանիշները:

Աղեքսանդրի կերպարի նկատմամբ բուռն հետաքրքրությունը մեզանում հենց սկզբից գրսևորման ինքնատիպ ձևեր է գտնում. հայկական աղեքսանդրապատումում իրենց որոշակի տեղն ունեն և բանահյուսական, և պատմական, և գրական ավանդույթները: Պատմական հավաստի կենսագրությունների (Կլիտարքոս, Արրիանոս, Պլուտարքոս, Ստրաբոն, Դիոդորոս Սիկիլիացի)¹ թարգմանություններից շատ առաջ միջնադարյան Հայաստանում լայնորեն տարածված էին ժողովրդական բազմաթիվ ավանդություններ Աղեքսանդրի մասին և հատկապես, Կալիսթենեսին վերագրվող հանրահայտ վեպը՝ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը» („Καλλιस्थένης ιστορία του αλεξάνδρου του μεγάλου του βασιλέως. Ούτος ιστορεί 'Αλεξάνδρου πράξεις“):

Ժողովրդական հիշյալ ավանդություններն ունեն տարբեր ակունքներ. նրանց մի մասն ունի գրքային ծագում՝ սերում է ուղղակի Կեղծ-Կալիսթենեսի երկից, ներկայացնելով վերջինիս առանձին դրվագները, մյուսը, հիմքում ունենալով նույն աղբյուրը, բավական փոփոխություններ են կրել՝ հարմարեցնելով հաճախ Աղեքսանդրի մասին անտիկ սյուժեն տվյալ հասարակարգի պահանջներին, բնականաբար, փոխելով նաև սկզբնաղբյուրի հորինվածքը: Մյուսներն առնչվում են պատմագրական ավանդներին, մնացածները՝ օտար, երբեմն արևելյան աղբյուր են ենթադրում և, վերջապես, մի սովոր մասն էլ ունի զուտ հայկական ծագում: Այս վերջիններում մակեդոնացի արքան, որը երբեմն հայացվում է, գործում է հայկական միջավայրում, ժամանակի պահանջներին համապատասխան²:

¹ Տե՛ս «Պատմություն Մեծին Աղեքսանդրի Մակեդոնացույ, թարգմանեալ ի Մատենարանէ Պատմադրութեանց Դիոդորոսի Սիկիլիացույ մեծանուն հեղինակի ի Գարրիէլ Սարկաւազէ Վարժապետեան Պատկանեանց», Աստրախան, 1827:

² Ա. Լիշան, Աղեքսանդրի առասպելի մը լուսաբանությունը, «Բազմավեպ», 1875, էջ 61: «Սովորք հայկականը», հատ. 1, Վենետիկ, 1853, էջ 11: Հ. Տաշյան, Ուսումնասիրությունք Տ Հանդես, № 1

«Աղեքսանդրի պատմության թարգմանության ժամանակն ինքնին նշանակալի է: Թարգմանությունը կատարվել է դեռևս V դարում՝ մեր դպրության արշալույսին, երբ երկրում թարգմանական աշխույժ ու խորապես մտածված գործունեություն էր ծավալվել: Աստվածաշնչի և կրոնական այլ գործերի բարձրարվեստ թարգմանությունների հետ մեկտեղ, մեր առաջին թարգմանիչներն ու մտավոր կյանքի կազմակերպիչները, համակված նպատակի միասնությամբ և արվեստագետի սթափ զգացողությամբ, հայ ընթերցողի սեփականությունն են դարձնում նաև աշխարհիկ-հեթանոսական բնույթի այս նշանավոր երկը:

Թարգմանության հավանական հեղինակ է համարվում պատմահայր Մովսես Խորենացին, որի «Հայոց պատմության» բազմաթիվ աղբյուրներից մեկն էլ Կեղծ-Կալիսթենեսի երկն է եղել³:

Հայկական միասնական պետականության ջատագով և հունական մշակույթի սիրահար Խորենացու համար այս ընտրությունը խիստ բնական և օրինաշատ պետք է համարել:

Առհասարակ հայ մատենագիրներից շատերին է ծանոթ և սիրելի «Աղեքսանդր Մակեդոնացու պատմությունը»: Այդ փաստը նկատվում և «Պատմություն» առանձին գրվագների ու հայ պատմիչների (Ղազար Փարսեցի, Թովմա Արծրունի, Հովհաննես Դրասխանակերտցի, Ստեփանոս Ասողիկ) երկերի միջև տարվող կոնկրետ զուգահեռների միջոցով հավաստվում է դեռևս սկսած XIX դարի առաջին տասնամյակներից: Այս առումով նշելի են հատկապես Հայկազյան բառարանի հեղինակների դիտումները և Հ. Տաշյանի կատարած մեծադրվագ հանդիպողությունները: Ուշագրավ է այն փաստը, որ հայ հեղինակները հիմնականում օգտվել են ոչ միայն ուղղակի «Պատմության» լայերեն թարգմանությունից, այլ ավելի հաճախ միջնորդաբար՝ Խորենացու լայնորեն տարածված «Հայոց պատմությունից»: Հայ մատենագիրների, մասնավորապես Խորենացու երկերում պահպանված հատվածների ուսումնասիրությունը Հ. Տաշյանին բերել է այն եզրակացության, որ վերջիններիս համար «Պատմությունը» ծառայել է նախ և առաջ իբրև օրինակ «գեղեցիկ գրություն», վսեմ ոճի և որ ամենակարևորն է, նրանց կարդացած բնագիրը հետազայում կրած անխուսափելի փոփոխություններով հանդերձ ընդհանուր առմամբ նույնն է, ինչ մեզ հասած արդի բնագիրը⁴:

Բանասիրության մեջ «Աղեքսանդր Մակեդոնացու պատմության» կապակցությամբ մշակվել է հարցերի մի կայուն շրջանակ, ուր առաջնահերթ նշանակություն են ստացել մասնավորապես «Պատմության» հեղինակի, հայերեն թարգմանության ժամանակի, թարգմանչի անձնավորության, հունարեն բնագրի հետ թարգմանության աղերսի, հայ մատենագրության մեջ նրա ազդե-

Ստույն-Կալիսթենես վարուց Աղեքսանդրի, Վիեննա, 1832, էջ 175: Ա. Ղազարյան, Ավանդապատում, Երևան, 1959, էջ 279:

³ Ա. Սուքրյան, Երեսնամյա պատերազմի Հայս և կատարած Արշակա արքային, «Բազմավեպ», Վենետիկ, 1878, էջ 9: Բ. Սարգիսյան, Տեսություն Մարիբայան ավանդության ըստ Մ. Խորենացու և անոր աղբերաց վրա, «Բազմավեպ», Վենետիկ, 1883, էջ 118: Հ. Տաշյան, Ուսումնասիրություն..., էջ 42: Կ. Խալաթյան, Մովսես Խորենացու նորագույն աղբյուրների մասին, Վիեննա, 1898, էջ 12, 24: Նույնի՝ Մովսես Խորենացու և յուր աղբյուրները, Վաղարշապատ, 1898, էջ Ա: Ն. Բյուզանցի, Քննասեր, Բ, էջ 36, 63:

⁴ Հ. Տաշյան, Ուսումնասիրություն..., էջ 41—42:

ցություն և հետքերի, հուշարձանի հայկական խմբագրությունների խնդիրները, որոնք բաղմիցս արժարժվել են հայ և օտար մի շարք խոշոր մասնագետների կողմից:

«Պատմության» հայերեն թարգմանության բնագիրը 10 ձեռագրերի քննական համեմատությամբ և աղբյուրագիտական-բանասիրական բնույթի առաջաբանով հրապարակվեց դեռևս 1842 թ. Վենետիկում, Մխիթարյան միաբանության բանասերների ջանքերով: Այդ արժեքավոր հրատարակությունը, կատարված դեռևս այն ժամանակ, երբ նվրոպայի առաջավոր երկրներում նոր-նոր էին մշակվում քննական բնագրերի պատրաստման սկզբունքները, իր անխուսափելի թերություններով հանդերձ մինչև օրս մնում է միակը:

Հիմնականում այս հրատարակությունն էր, որ առաջացրեց օտարազգի հայագետների ու աղեքսանդրագետների բուռն հետաքրքրությունը դեպի «Պատմության» հայկական թարգմանությունը: Արդեն երկու տարի անց՝ 1844 թ. և ապա՝ 1845 թ. գերմանական Հալլե և Մյունխեն քաղաքներում լույս տեսնող գիտական հանդեսներում ուսումնասիրություններ հրապարակվեցին հայկական թարգմանության մասին, ուր հեղինակները, բարձր գնահատելով վերջինս, ցավ էին հայտնում, որ նրա բնագրին կցված չէ եվրոպական որևէ լեզվով զուգահեռ թարգմանություն:

Նշանավոր հայագետներ Պետերմանը, Հյուբշմանը, հայտնի աղեքսանդրագետներ Մյուլլերը⁵, Զախերը, Ռումհելդը, Բաումհարդները և ուրիշներ, քննություն են թարկելով հրապարակ հանված նյութերը, մասնավորապես հայերեն թարգմանության իրենց ծանոթ հատվածները, միահամուռ նշում են, որ հուշարձանի հունարեն բնագրի նախնական՝ աղեքսանդրյան վիճակը, կարելի է պատկերացնել սոսկ այն ժամանակ, երբ քննական եղանակով համեմատվեն և ի մի բերվեն նրա չորս՝ հավասարաթեք հնագույն աղբյուրները. դրանք են հունարեն A (ալեքսանդրյան) բնագիրը, լատինական, հայկական և ասորական թարգմանությունները և որ այնքան ժամանակ, քանի դեռ հայկական թարգմանությունը մատչելի չէ ուսումնասիրողներին, այդ պատկերացումը կլինի թերի: Մանավանդ որ, ինչպես Զախերն է նշում, արդեն համեմատված հատվածներից իսկ դեռ այն ժամանակ պարզ էր դառնում, որ հայկական թարգմանությունը ոչ միայն ներկայացնում է բնագրի հնագույն վիճակը, ոչ միայն նրա շատ կարևոր հատվածներ ավելի լավ են պահպանված, քան Վալերիոսի լատինական խմբագրության մեջ, այլև հաստատում են Վալերիոսի մոտ առկա նախնական բնագրի այն մասերը, որոնք բոլոր հունարեն ձեռագրերում անհետ կորած են: Մովեստական աղեքսանդրագետների մի շարք նորագույն ուսումնասիրություններում հավաստվում է նույն այդ միտքը, մասնավորապես, որ «բոլոր երեք թարգմանությունները (հայկական, լատինական և ասորական—Հ. Ս.) ուսումնասիրողներին հնարավորություն են տալիս բաղդատության ճանապարհով վերահսկել A վերսիայի բնագիրը և հնարավորին չափ վերականգնել նրա պակասող և աղճատված մասերը»⁶:

⁵ Մյուլլերին է պատկանում Աղեքսանդրի պատմության հունարեն բնագրի և լատինական վերսիայի գիտաքննական առաջին հրատարակությունը: *Seu Carolus Muller, Arriani anabasis et indica, reliqua Arriani, et Scriptorum de rebus Alexandri Magni fragmenta. Pseudocallisthenis historia fabulosa, Itinerarium Alexandri*, Paris, 1846.

⁶ Т. И. Кузнецова, Историческая тема в греческом романе «Роман об Александре» («Античный роман», М., 1969, էջ 191)։

Արդ, «Պատմություն» հայերեն թարգմանության ուսումնասիրությանը և նրա բնագրերի պատրաստմանը ձեռնամուխ եղող մասնագետի խնդիրն է տալ գրական-մշակութային այդ խոշոր երևույթի լրիվ և հանգամանալից վերլուծությունը, բացատրել նրա ծագման, ձևավորման և գոյատևման պատմությունը, էական, հատկանշող կողմերն ու առանձնահատկությունները:

«Աղեքսանդրի պատմության», ինչպես և առհասարակ նման ստեղծագործությունների ձեռագրերի գիտական դասակարգումը և հուշարձանի բանասիրական քննությունը, ներկայացնելով գիտական ինքնակա հետաքրքրություն, ըստ էության, նպաստում է նույն այն պատմագրական խնդիրների պարզաբանմանը, որոնք ակադ. Դ. Լիխաչովի բնութագրմամբ ծառայում են հուշարձանի գրական պատմության առաջացման հարցի բացահայտմանը: Հետևաբար, համապատասխան ձեռագրերի և նրանց խմբագրությունների մեր կողմից ստորև առաջարկվող դասակարգումը, բխելով «Պատմության»՝ հայ իրականության մեջ պատմականորեն առաջացած առանձին օղակների ուսումնասիրությունից, հիմնական շեշտը դնում է հուշարձանի հայկական թարգմանության ընդհանուր պատմության վրա:

Համառոտակի ծանոթանանք «Պատմության» հայկական ձեռագրերին և նրանց խմբագրություններին: Այժմ մեզ հայտնի է շուրջ 70 ձեռագիր, որոնցից 31-ը պահվում է Մաշտոցի անվան Մատենադարանում, իսկ մնացածները գտնվում են այլ դրասյահոցներում և մասնավոր հավաքածուներում:

Ձեռագրերի համալիր քննությունը ցույց է տալիս, որ մեզանում շուրջ 1500-ամյա ստեղծագործական պատմության ընթացքում հուշարձանն անցել է օրգանական երկու հիմնական փուլ:

Առաջին փուլը, որն ընդգրկում է V—XIII դդ., համընկնում է «Պատմության» հայկական նախնական խմբագրության գոյության շրջանի հետ: Այս փուլում «Պատմությունը» շարունակում էր պահպանել իր ինքնահատուկ հեթանոսական ոգին և հույկական բնագրի նախնական վիճակը՝ ընդհանուր առմամբ հավատարիմ մնալով հունական նախաբնագրին, առանց տեղայնացման նշանների: Նկատենք, սակայն, որ թեպետ հիշյալ նախնական խմբագրության գոյության փաստը ինքնին ընդունվել է անցյալի մասնագետների կողմից, սակայն ձեռագրերի հետազոտության համադիր-քննական եղանակի բացակայության և փաստական նյութի անբավարարության պայմաններում հարցի քննությունը մասնակի դիտումներից և ենթադրություններից այն կողմ չի անցել: Ավելին, ուղղակի փաստերի բացակայությունը և առանձին ձեռագրերի կրած նշանակալի այլափոխություններն ու հայկական նորանոր շերտերի բնականոն ներձյուսումը բնագրին դժվարացրել են հրապարակի վրա եղած համապատասխան օրինակների վատորոշումը և համակարգումը այն աստիճան, որ «Պատմության» խորահմուտ գիտակ Հ. Տաշյանն լանգամ ստիսլված էր նախնական խմբագրության մասին փոքր-ինչ պատկերացում ունենալու համար դիմել կողմնակի և միջնորդ աղբյուրների՝ «համեմատել հայ բնագիրն այն քանի մը հատակոտոր նշխարաց հետ, որոնք բարեբախտու-

7 Կատենադարանում պահվում են նաև «Պատմության» լենինգրադում, Վիեննայում, Բեռլինում և Երուսաղեմում գտնվող ձեռագրերի 15 մանրածաղկավենները, որոնց տվյալները ևս գտագործված են հոգվածում:

թյամբ պահված են ուրիշ գրոց մեջ, և որք Կեղառուցի են դարեր հառաջ ըլլալով, անոր խմբագրութենեն չէին կրնար ազդվել»⁸:

Ինքնին հասկանալի է, որ հարցի քննությունը մեծապես կշահեր, եթե հրապարակի վրա լիներ մինչև XIV դարը ստեղծված՝ «Պատմության» նախակեղառնցիական շրջանի թեկուզ մի օրինակ, որն անաղարտ վիճակում ներկայացներ բուն նախնական խմբագրությունը: Այժմ արդեն, երբ մեզ հաջողվեց գտնել այդ օրինակը և պարզել նրանից սերված ձեռագրերի մի ողջ խումբ, նոր հնարավորություններ են բացվում հուշարձանի հայերեն թարգմանության պատմության բաց մնացած նախնական կարևոր զղակը ձշտելու և, մասնավորապես, նրա սկզբնական տեսքն ու հետագա շերտերը զատորոշելու ասպարեզում:

Մեզ հայտնի է նախնական խմբագրության 8 ձեռագիր (Մատենադարանի № 1783—ԺԸ դ., № 3182—ԺԷ դ., № 5627—ԺԸ դ., № 5632—ԺԹ դ., № 6485—ԺԷ դ., № 9631—ԺԸ դ., № 10151—ԺԳ, ԺԷ դ., Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի № А-9—ԺԸ դ.), որոնց հայկական նախօրինակը, այսինքն այն մերձավոր բնագիրը, որից սերում են մնացած բոլորը. № 10151 ձեռագիրն է, բոլոր առումներով եզակի և շափազանց արժեքավոր մի օրինակ, դժբախտաբար մինչև օրս դուրս մնացած բոլոր մասնագետների, այդ թվում և «Պատմության» հրատարակիչների տեսադաշտից:

№ 10151 ձեռագիրը հնագույնն է առհասարակ «Պատմության» մեզ հայտնի բոլոր օրինակներից: Նրա բնագիրը սկզբից և վերջից թերի է: Հիմնական՝ միջին մասը, որն ընդօրինակվել է XIII դարում, կաֆաներ շունի և բաժանված է խորագիր ունեցող գլուխների՝ «Գործք Աղեքսանդրի» (էջ 14 ա), «Սպանումն Դարեհի և Իսսոսա և Ջառիվարդանայ» (էջ 56 ա), «Թուխթ Աղեքսանդրի առ ամազունս» (էջ 83 ա) և այլն: Այնուհետև՝ 1606 թ., հետագա խմբագրության կաֆաներ ու այլ հավելումներ ունեցող մի օրինակից այն լրացրել է Անտոն աբեղան, որի մասին հայտնում է գրիչը ձեռագրի 201 և 124 ա էջերում: Ինչպես այս, այնպես էլ սրան հարող համապատասխան ձեռագրերի ուսումնասիրությունը մեզ բերել է հետևյալ եզրահանգումների:

Իր ստեղծումից ոչ շատ հետո ձեռագիրը կորցնում է որոշ էջեր՝ մեկ մամուլ սկզբից և երկու մամուլ վերջից, սակայն այդ թերի վիճակում էլ ընդհուպ մինչև 1606 թ.՝ այն տարին, երբ նա լրացվում է հետագա խմբագրության արդեն կաֆայավոր համապատասխան հատվածներով, բավական երկար ժամանակ՝ առնվազն երկու-երեք հարյուրամյակ, իբրև ընտիր և օրինակելի մի ձեռագիր շարունակել է զգտագործվել ընթերցանության համար: Այդ են վկայում ձեռագրի մաշվածության աստիճանը և բազմիցս նորոգվելու և կազմվելու հետքերը: Ինչպես է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակվել է ոչ միայն 1606 թ.

8 Հ. Տաշյան. Ուսումնասիրությունը ..., էջ 23: Այս համեմատությունները, սակայն, բավական հետաքրքիր են «Աղեքսանդրի Պատմության» և հայ հին և միջնադարյան մատենագրության առնչությունների ուսումնասիրման համար:

9 Մինչև վերջերս՝ 1962 թ., վրաստանի Կենտրոնական պատմական արխիվում պահվող այս ձեռագրի մասին միակ հիշատակությունը հանդիպում ենք Լ. Մելիքսեթ-Բեկի կազմած ձեռագրացուցակում («Բանյուկ Մատենադարան», 1958, № 4, էջ 398), ուր տրվում է սոսկ ձեռագրի հակիրճ նկարագրությունը, և որի մեջ ակնարկ անգամ չկա նրա հիմնական մասի գրչության ժամանակի. հետագայում լրացվելու, բնագրի նախնական խմբագրության և այլնի մասին: Ձեռագրին կաֆաների առնչությամբ անդրադարձել ենք մենք «Հայ միջնադարյան կաֆաներ» գրքում, Երևան, 1975, էջ 53:

լրացվելուց հետո, այլև բավական առաջ, երբ այն ամբողջական էր՝ չէր կորցրել իր էջերը: Դժբախտաբար, նման որևէ ընդօրինակություն առաջիկա մեզ հայտնի չէ: Այսուհանդերձ, ժամանակին արդեն գիտակցվել է ձեռագրի կարևորությունը և եզակիությունը, քանի որ նույնիսկ թերի վիճակում այն բազմիցս ընդօրինակվել է:

Նախնական խմբագրությանը պատկանող առանձին ձեռագրերի փոխառնությունները քննելու ընթացքում պարզ դարձավ նաև, որ դրանք բոլորը ուղղակի կամ միջնորդաբար սերում են խնդրո առարկա № 10151 ձեռագրի պակասավոր վիճակից¹⁰: Այսպես ասելով մենք նկատի ունենք հիշյալ խմբագրության մյուս ձեռագրերի հետ № 10151-ի բուն մասի դրսևորած նույնությունը, իսկ լրացված մասերը, ինչպես կտեսնենք ստորև, միշտ չէ. որ նույն աղբյուրն են հուշում:

Քննենք այդ ձեռագրերը:

Դրանցից մեկը՝ Մատենադարանի № 3182 ձեռագիրը, որը ստեղծվել է իր նախօրինակի՝ № 10151 ձեռագրի լրացվելուց 68 տարի հետո, նույնպես լրիվ է, այսինքն լրացված ունի ճիշտ այն մասերը, որոնք սկզբից և վերջից պակասում էին մայր օրինակում: Ընդ որում, լրացված մասերը, վերջինիս համապատասխան հատվածներին հիմնականում համընկնելով, երբեմն բառացի շեն նույնանում: Ինչո՞ւ: Նկատենք, որ № 3182 ձեռագիրը ընդօրինակել, սրբագրել ու մասնակի լրացումներով օժտել է նշանավոր փիլիսոփա և թարգմանիչ Ստեփանոս Լեհացու աշակերտ Ներսեսը, որը էջմիածնի վանքի մատենադարանապետն էր: Բնական է, որ նման դարգացած անձնավորությունը պետք է գործուն մասնակցություն ունենար այդ նշանավոր երկր պատշաճ ձևով ընթերցողին ներկայացնելու հարցում: Այդ բանի համար որոշակի հիմքեր է տալիս ձեռագիրը և մասնավորապես իր՝ Ներսեսի խոստովանությունը «Պատմությանը» կցած հիշատակարանում. «...ես՝ Ներսէս բանի սպասաւոր, հարեանցաբար ուրեք-ուրեք ուղղեցի զշարագրութիւնս սորին, զոր ի գրչաւ իր սղալեալ, ի վայելս անձին իմոյ...»¹¹: Հիրավի, պարզվում է, որ № 3182 ձեռագրի լրացված մասերը երբեմն ավելի հաջող են, քան մայր ձեռագրի: հետագայում կցված համապատասխան կտորները: Մնում է ենթադրել, որ Ներսեսը, բարձր գնահատելով 10151-ի բուն, միջին մասի արժեքը, ընդօրինակել է այն, իսկ լրացվելիք մասերի համար ընտրել է մեկ այլ՝ ճշտված օրինակ:

Մնացած վեց ձեռագրերից երկուսը (Մատենադարանի № 5627 և Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի A-9) XVIII դարում կատարված ուղղակի ընդօրինակություն են նախօրինակի արդեն լրացված վիճակից, որտեղ կույր հետևության մեջ վերարտադրված են նախօրինակի գրչական ակնհայտ շատ սխալներ, ինչպես նաև նրա վերանորոգման, լրացման և մաշվածության հետևանքով առաջացած որոշ աղճատումներ:

¹⁰ Ի վ 10151-ը, և՛ XVII—XVIII դդ. նրանից սերված բոլոր ձեռագրերը լրացված են բացառապես հետագա խմբագրության օրինակներով և ոչ թե նոր՝ նախնական խմբագրության համապատասխան հատվածներով, որն ավելի տրամաբանական կլիներ, ուստի մնում է ենթադրել, որ այդ դարերում նախնական խմբագրությունն արդեն շրջանառությունից դուրս էր: Հրապարակի վրա եղել է միայն № 10151-ը, այն էլ՝ պակասավոր:

¹¹ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 3182, էջ 238 ր:

Մյուս երեք ձեռագրերի (Մատենադարանի № 1783, 6485, 9631) հետ նախօրինակի կապը թեև դարձյալ անվիճելի, սակայն միջնորդավորված է միջանկյալ ընդօրինակությամբ, որն, ի դեպ, բուն նախօրինակը էական փոփոխությունների չի ենթարկել:

Եվ վերջապես, վերջին՝ ութերորդ ձեռագիրը (Մատենադարանի № 5632) ավելի բարդ, ստեղծագործական աշխատանք է ենթադրում, քանի որ այն սերում է հրկու նախագաղափար օրինակից. գրիչը ձեռքի տակ ունեցել է ոչ թե մեկ, այլ հրկու համեմատվող բնագիր, որը և նրան հնարավորություն է տվել ստեղծելու քննական բնագրի ուղադրույթ մի օրինակ: Վերջինս, իրոք, կարելի է համարել «Աղերսանդրի պատմության» հայերեն թարգմանության նախնական խմբագրության քննական բնագրի ստեղծման առաջին և առաջժամակ փորձը, կատարված դեռևս 1845 թ., իմ անապատում, գրիչ և խմբագիր Թոփուզյան Հակոբ վարդապետի կողմից: Զարմանալի օրինաչափությամբ այստեղ ևս նույնությամբ առկա բուն բնագրի պակասավոր և լրացված լինելու փաստը և այլ էական աղբյուրներ կրկին մատնանշում են նույն ընդհանուր մայր օրինակը: № 10151 ձեռագիրը, որի բազմաթիվ «սերունդներից» իրավամբ պետք է համարել և այս ձեռագիրը: Զի բացաված, որ սա ևս լինի № 10151-ի ուղղակի ընդօրինակությունը, բայց քանի որ համեմատությունը երկրորդ աղբյուրի հետ կատարվել է հենց ձեռագրի գրչության ընթացքում՝ ղուգահեռաբար, բնականաբար խաթարելով բնօրինակի նախնական հորինվածքը, ուստի որոշակի պնդում անել այդ մասին, հնարավոր չէ: Ի դեպ նշենք, որ համեմատության համար հիշյալ երկրորդ աղբյուրը, ինչպես պարզվում է, գրիչը վերցրել է ուշ շրջանի՝ հետագա խմբագրության օրինակներից:

Քննված 8 ձեռագրերն էլ, ինչպես տեսանք, կաֆաներով առատ չեն՝ սոսկ 9 կաֆա սկզբի և 15 կաֆա վերջի լրացված մասերում: Պարզվում է նաև, որ ժամանակին, իրոք, գիտակցվել է նման օրինակների կաֆաների առումով պակասավոր լինելը և փորձեր են արվել այդ բացը լրացնելու ուղղությամբ՝ նրանց կցելով ծավալուն հավելված-կաֆայաշարքեր: Մատենադարանի № 6485 և № 5632 ձեռագրերը, օրինակ, ունեն խորագրված կաֆայաշարքեր, որոնց առանձին միավորներին ցրված կարելի է հանդիպել նաև «Պատմության» հետագա խմբագրության կաֆայավոր շատ օրինակներում և առանձին շարքերում: Հիշատակություններ են պահպանվել այլ գրապահոցներում գտնվող նույնատիպ ևս երկու ձեռագրի մասին, որոնց հավելված կաֆայաշարքերը խորագրված են՝ «Մնացեալ կաֆայքն սոքա են, զորս ետոյ գտեսալ, աստանայր գրեցաք»¹³:

Այսպիսով, «Պատմության» նախնական խմբագրությունը ներկայացնող հնագույն օրինակի պակասող մասերը հետագա խմբագրության հատվածներում լրացնելու և տարբեր ժամանակներում նրանից սերված մի շարք ընդօրինակությունների հետևանքով ստացվել է մի յուրատեսակ բնագիր ներկայացնող ձեռագրախումբ, որը երկար ժամանակ ուսումնասիրողների և «Պատմության» հրատարակիչների կողմից որակվել է իբրև անբացատրելի, «երկբա-

¹² Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5623:

¹³ Վիեննայի Միխայիլյան մատենադարան, ձեռ. № 1390: Տե՛ս Ն. Տաշյան. Ուսումնասիրություն..., էջ 113: Անկյուրիայի Կարմիր վանքի մատենադարան, ձեռ. № 3. տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Անկյուրիո Կարմիր վանուց և շրջակայից», Անթիլիաս, 1957, էջ 37:

յական օրինակներ»¹⁴։ Այժմ արդեն, երբ պարզված է նրանց նախօրինակը, նկատի առնված վերջինիս ամբողջականությունը մասնակիորեն խախտող բոլոր ոչ ստեղծագործական պահերը (բնագրի մի մասի պատահական կորուստ, լրացումներ և այլն), տարրորոշված են առանձին շերտերը բնագրում, ակնհայտ է դառնում N 10151 ձեռագրի եզակիությունը, իբրև հնագույն և հավաստի աղբյուրի, որը հնարավորություն է ընձեռում թափանցելու հուշարձանի հայկական խմբագրության պատմության ակունքները։

Այսպիսի վիճակ էր ներկայացնում Աղեքսանդրի պատմության հայերեն թարգմանությունը V—XIII դդ.։

Ուսումնասիրվող բնագրի պատմության բոլոր միջանկյալ օղակների վերականգնման անհրաժեշտությունը թելադրում է նախքան հետագա խմբագրությանն անցնելը անդրադառնալ ձեռագրերի մի փոքրիկ խմբի (Մատենադարանի N 10448, N 1664, Լենինգրադի Արևելագիտության ինստիտուտի N A-76, Վիեննայի Մխիթ. մատենադարանի N 947 ձեռագրեր), որոնց ներկայացրած խմբագրությունը պայմանականորեն անվանում ենք «միջանկյալ խմբագրություն»։ Նշված ձեռագրերը թեպետ հատուկ քննության չեն ենթարկվել և առհասարակ նրանց պատկանելությունը առանձին խմբագրության չի գիտակցվել, այսուհանդերձ, Կ. Կոստանյանցի և Ն. Ակինյանի կողմից թույլիկ նկատվել է ձեռագրերից մեկի՝ N 1664-ի բնագրի հնությունը։ Ն. Ակինյանը, օրինակ, այն համարում է «հին օրինակե մը արտագրված» ձեռագրերից մեկը, իսկ Կ. Կոստանյանցը՝ «Կեղծ Կալիսթենեսի նախնյաց թարգմանություն», ավելացնելով, որ «քանի որ համեմատություններ անելու ժամանակ չենք ունեցել, զրշության արժանիքի մասին բան չունինք ասելու»¹⁵։ Թեև այս խմբագրության ուսումնասիրությունը մենք չենք համարում լիովին ավարտված, սակայն համեմատելով այն «Պատմության» լավագույն օրինակների հետ, նկատել ենք, մեր կարծիքով, չափազանց ուշադրավ հրեություններ։ Նշելի է հատկապես նրա տեքստային ամբողջականությունը։ Այսպես կարող ենք ցույց տալ հատվածներ, որոնք ոչ միայն բացակայում են մնացած բոլոր օրինակներում, այլև ավելի լավ են պահպանվել, քան հունական և լատինական հնագույն բնագրերում, որտեղ այդ հատվածները աղճատ և թերի են։ Համոզված ենք, որ այս ուղղությամբ ապագա հետախուզումները և, մասնավորապես, հունական և լատինականի հետ վերջինիս համեմատությունը ավելի կոնկրետ արդյունքներ կտան։

XIII—XIV դդ. «Պատմությունը» թեև կոխում է իր կյանքի երկրորդ՝ հիմնական փուլը, որը և համընկնում է նրա այսպես կոչված «հետագա» կամ «ընդարձակ» խմբագրության ձևավորման հետ։ «Պատմության» երկրորդ կյանքը պայմանավորող պատմագրական առաջնահերթ նախադրյալներից էր գրականության աշխարհականացումը, հատկապես հայրենների բուռն զարգացումը և նորոգված հետաքրքրությունը կենսական մեծ ուժով և աշխարհիկ բովանդակությամբ օժտված այնպիսի համաշխարհային սյուժեների նկատմամբ, ինչպիսիք էին Աղեքսանդրի պատմությունը և «Հազար ու մի գիշեր»

¹⁴ «Պատմություն մեծի աշխարհակալին Աղեքսանդրի Մակեդոնացու», Վենետիկ, 1642, էջ 11։

¹⁵ Կ. Կոստանյանց, Գրիգորիս Աղթամարցի և յուր տաղերը, Քիֆլիս, 1898, էջ 103, Ն. Ակինյան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարի, Վիեննա, 1958, էջ 42։

հեթիաթաշարի՝ Պղնձե քաղաքի և Մանկան ու աղջկա զրույցները, Փահլու թագավորի պատմությունը և այլն: Այս և հաջորդող հարյուրամյակների ընթացքում «Պատմությունը» խմբագրվում է, աստիճանաբար համալրվում բազմաթիվ արձակ հավելադրություններով և տարբեր հեղինակների կողմից նրա դրվագներին հյուսված հատուկ երկերով՝ կախաներով: Որոշակի աշխատանքներ են կատարվում նաև «Պատմության» ձևագիր օրինակների նկարազարդման ուղղությամբ, որոնք և նշանավորում են աշխարհիկ թեմաներով նկարազարդումների սկզբնավորումը առհասարակ հայկական մանրանկարչության մեջ¹⁶:

Հետագա խմբագրության ստեղծագործական պատմությանը հետամուտ լինելու նպատակով նրա քննությունը կատարել ենք շերտ առ շերտ: Տիպաբանական էական ընդհանրություններ դրսևորելով, այս խմբագրությանը պատկանող ձևագրերը, սակայն, իրենց ներսում ունեն այլևայլ ստորաբաժանումներ: Ըստ այդմ, կարելի է տարբերել երեք հիմնական ձևագրեր՝ կեչառեցիական, գրիգորիսյան, զաքարյան, իբրև զաղափարական միասնական հիմքի վրա իրականացված միևնույն խմբագրության ժամանակագրական երեք առանձին շերտերի կրողներ:

Անդրադառնալով այդ շերտերին առանձին-առանձին:

Ձևագրերի կեչառեցիական խումբը անխզելի կապված է XIII—XIV դդ. նշանավոր տաղերգու և մշակութային գործիչ, իր բնույթով հզակի և աննախադեպ հայկական խմբագրության հիմնադիր, «Պատմության» գրական-գեղարվեստական մշակման և մեկնաբանության հեղինակ Խաչատուր Կեչառեցու անվան հետ:

Անտիկ սյուժեի արտաքին ուշագրավության, արկածային և հրաշալիատում տարրի հեղեղվածության, նրա հերոսների ողմանտիկ, հաճախ հերիաթային կերպավորման և պասմական շփարշի հտեում Կեչառեցին նմարեց «Պատմության» բարոյակրթիչ ուժը, զաղափարական միտվածությունը և ամենակարևորը՝ ներկան: Մեր կարծիքով, ամենին ոչ երկրորդական հանգամանքներ, որոնցով էլ պայմանավորված էր նոր խմբագրության նախնական մտահղացումը, իսկ այնուհետև՝ հետագու իրականացումն ու ամբողջացումը: Կեչառեցու՝ իբրև խմբագրի գիտավորությունները հստակորեն շարադրված են հատկապես «Պատմությանը» կցված նրա «Նախագրություն» կոչվող առաջաբանում և հիշատակարաններում, որոնք այլ փաստերի հետ մերօրյա ուսումնասիրողի ձեռքին անհերքելի և պերճախոս փաստաթուղթ կարող են դառնալ նորովի և ըստ ամենայնի գնահատելու նրա վաստակը հատկապես միջնադարյան շրջանները ժողովրդականացնելու գործում: Ահավասիկ Կեչառեցու այդ գրվածքների կարևոր մասերը՝ հատվածաբար. «Եւ արդ զայս այսպէս համեմատեալ մի ստգտանիմք յոմանց, զի զպատճառն վերագոյն ճառեցաք. այլ ընթեռնելով զսա յիշման արժանի լիցի ի ձէնջ Խաչատուր Կեչառեցիս: Զի ի յարմարումն սակաւ բանիցս եւ ի գրչութիւն գրոցս հաւատով աշխատեցայ: Նա զի հեթանոսական գրեալն անմիաբան են եւ անվայելուչ՝ ի վերոյ շաղկապեալ բանիւք որակացեալ եւ ներքոյ լի սնոտի կարծեալք եւ խաբէութեամբ, որպէս և առ գրասիրտն Պաղոմեիւ անսպառնեցաւ: Իսկ զայս Պատ-

¹⁶ Տե՛ս Վենետիկի Մխիթարյան մատենադարանի № 424 ձեռագրի (XIV դար) մանրանկարները Զր. Մակիերի «L'Enluminure arménienne profane» (Paris, 1982) աւրումում:

մութիւնս աշխարհակալին Աղեքսանդրի, զոր գրեցի իմով ձեռամբս, սակս աւգտի ինձ եւ այլ համբակաց, որք կամին աւգտիլ յԱղեքսանդրէ: Զի թէպէտ էր ի հին եւ յընտիր արինսակէ, այլ անյարմար եւ շաղփաղփ՝ վասն որոյ զտեալ եւ քերեալ քերողարէն, արարի անխոտորնակ ճանապարհ, զի ի լընթեռնուն իմասցին սյուէտիկոսք եւ քարոտողարք եկեղեցւոյ և ապա գիտասցեն զիմ աշխատանս, զոր ի սմա լիապէս վաստակեցի»: «Աստուածազան խնդիր հարանց հոգեւորաց եւ համշիրակ համբակաց եւ համակամ եւ մշտաշարժ սիրով ստիպէ զմեզ ի բարսունական վիպառանութիւն բանին արհեստից արտաճառել սակաւ պարութեայիւ զաշխարհակալ իմաստունն, որ տիպ եւ զաղափար եղեւ ճշմարիտ երկնաւոր թագաւորին եւ կուսածին Աստուծոյն մեքոյ Յիսուսի Բրիստոսի: Զի թէպէտ եւ տրամաբանեալ պատմադրեցաւ ի ստագիրացւոյն յԱրիստոտէլէ, սակայն արդիւնքն շահաւէտ ոչ տրամադրեցաւ տարմալուկ մտաց նորա...: Ոչ վերջանամք պատմել պայմանիւ զանսայթաք քաղաքաւորութիւն կենաց նորա. Յօգուտ եւ յօրինակ ամենայն թագաւորաց եւ իշխանաց, զսկիզբն արիական եւ քաջահմուտ արանց պատերազմողաց՝ շորսն են. արտադատմունք, դիտութիւն, արիութիւն, համբաւ եւ դատաստան: Այսպէս եւ ըստ այսմ օրինակի վայել է արքայից եւ զօրապետաց իմաստունն եւ հանձարեղս լինել...»¹⁷:

Միջնադարի պայմաններում Խաչատուր Կեչառեցու կերպարը մեզ է ներկայանում իբրեւ ռաւակապետ նոր մտածողի կերպար, որի գործունէությունը հաճախ ոչ միայն հեռանում, այլև որոշակի հակադրություն մեջ է մտնում եկեղեցական մտայնության հետ, ծառայելով իր ժողովրդի իրական՝ բարու-լա-քաղսքական և պատմական շահերին: Մտանձնելով ժամանակի մտավոր կյանքի կազմակերպիչներից մեկի ծանր դերը, Կեչառեցին իր սերնդակիցների և ապագայի համար մոռացության գրկից ոգեկոչում է առողջ ու կենսունակ իդեալներ: Դրանցից մեկին՝ աշխարհահռչակ Աղեքսանդրին համարելով «տիպ և զաղափար», ջանում է նրա միջոցով նախ և առաջ պետական մտածողության զաղափար սերմանել հայ ընթերցողի հոգում: «Մշտաշարժ սերբ» և հավատը իր կատարածի կարևորության նկատմամբ ստիպում են նրան բռնել բավական համարձակ քայլի՝ Քրիստոսի և Աղեքսանդրի կերպարների վուդադիր համեմատության՝ 18 տնօրինականների միջոցով, քրիստոնեացնել Աղեքսանդրին, որ նույնն է, թե հայ ընթերցողի համար հեռավոր անցյալի օտարածին և այլադավան հերոսին տարձնել մոտ ու մերձավոր, անխոցելի՝ բոլոր առումներով: Կեչառեցու այս արարքը, որն իրապես իր ժամանակի համար մի սխրանք էր, հարյուրամյակներ անց նույնիսկ չընկալվելով ըստ ամենայնի, ենթարկվել է այլադան մեկնաբանությունների, հաճախ արժանանալով մերժողական վերաբերմունքի¹⁸: Այդ ավելի քան տարօրինակ է մանավանդ այն պատճառով, որ կարծես կանխելով իր հնարավոր ընդդիմախոսներին, հեղինակը, նախադրության մեջ և հիշատակարաններում, ինչպես տեսանք, արդեն ազդարարել էր իր հիմնական դիտավորու-

17 Հ. Տաշյան, Ուսումնասիրությունք..., էջ 88—90, 103—104, տե՛ս նաև Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի № 473 ձեռ. էջ 258—261, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 10151, էջ 111 բ—112 ա և այլուր:

18 Հ. Սիմոնյան, Հայ միջնադարյան կաթաներ, էջ 67: Անհրաժեշտ է նկատել, որ խուսափելով արձակ բնագիրը անհարկի միջամտելուց, Կեչառեցին արձակ բոլոր հավելադրությունները միտումնավոր կցել է բնագրին և ոչ թե ներմուծել նրա մեջ:

թյունները և զրդապատճառները այդ մեծ պործը նախաձեռնելիս: Կեչառեցու վկայությամբ դրանք հետևյալներն են. «Պատմության» հեղինակական ոգին մեղմելը և դեպի հայ ընթերցողը «ուղիղ ճանապարհ» բացելը, դավանաբանական առումով հեթանոս արքային անխոցելի դարձնելը, Աղեքսանդրի կերպարով ժամանակակիցներին կրթելը, թարգմանության լեզուն՝ V դարի դասական հայերենը, ժամանակի խոսակցական լեզվով գրված զոդտրիկ բանաստեղծություններով մատչելի դարձնելը շատերին, որը և վերջին հաշվով նշանակում էր արդեն աստիճանական մահացման վիճակում գտնվող վեպյո վերակենդանացում և ժողովրդականացում:

Բացի արձակ հավելագրություններից՝ Հիշատակարաններից, Տնօրինականներից, Բարառություններից, Կեչառեցու տեսական շատ գրույթների ու դադափարների գեղարվեստական կոնկրետ արտահայտությունը եղան նրա օրինած 127 կաֆաները, որոնք ներմուծվելով բնադիր, դարձան «Պատմության» հայկական թարգմանության անկապտելի մասը:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում կեչառեցիական խմբի հաղվագյուտ ձեռագրերից մեկը՝ Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի № 424 ձեռագիրը, որը, ինչպես պարզված է, հանդիսանում է կաֆաներ ու նկարազարդումներ պարունակող «Պատմության» հնագույն օրինակը: Ձեռագրի քննությունը թույլ է տալիս տվյալ դեպքում ոչ միայն 127 կաֆաների, այլև մանրանկարների ներմուծումը «Պատմության» մեջ դիտել իբրև մի միասնական երևույթ, իրագործված ամենայն հավանականությամբ հաշտուր Կեչառեցու կողմից:

Ժամանակին հուշարձանի ժողովրդականացումը մեծ արձագանք է գտնում հայ առաջագեծ շրջաններում: Պատահական չէ, որ մշակութային մեծ նշանակություն ունեցող հետագա խմբագրության ստեղծման պործում Կեչառեցուց բացի աչքի ընկնող դեր խաղացին նաև միջնադարի գրեթե բոլոր նշանավոր հայ բանաստեղծները՝ Ֆրիկը, Գրիգորիս Աղթամարցին, Հովասափ Սեբաստացին, Զաքարիա Դնունեցին և ուրիշներ:

Հետագա խմբագրության ձեռագրերի և նրանց տարրնթերցվածների համադիր քննությունը խոսում է XVI դարում առաջացած ևս երկու նոր շերտերի մասին: Գրիգորիս Աղթամարցու և Զաքարիա Դնունեցու համակողմանի աշխատանքի արդյունք հանդիսացող այդ շերտերը ներկայացնում են հետևելողական ու կայուն համակարգ՝ նոր կաֆաներ, մանրանկարներ, գրչական, յուրաքանչյուրի և խմբագրական աշխատանք և այլն:

«Աղեքսանդրի պատմության» հետ գրիգորիսյան բաղմապիսի առնչությունները, մասնավորապես 1526 և 1536 թթ. նրա ամենագործուն մասնակցությամբ ստեղծված «Պատմության» երկու ինքնագիր օրինակները¹⁹, իր և իր գործակիցների ինքնագիր վկայությունները հավաստում են, որ բանաստեղծը յուրովի շարունակել, դարգացրել ու ամբողջացրել է իր նշանավոր նախորդի՝ հաշտուր Կեչառեցու դեռևս երկու դար առաջ նախաձեռնած աշխատանքը: Տիպաբանական առումով, հետևաբար, այստեղ ոչ մի տարբերություն չկա: Աղթամարցու գրական-ստեղծագործական մղումները, որոնք

¹⁹ Երկու օրինակներն էլ բարեբախտաբար պահպանվել են. առաջինը պահվում է Հ. Քյուրտյանի ձեռագրական հավաքածուում, երկրորդը՝ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում, № 473:

ի վերջո կրկին ծառայել են միջնադարյան զրույցները ժողովրդականացնելու նշանակալի գործին, ավելի քան համոզիչ են դառնում, երբ նկատի ենք առնում ոչ միայն «Աղեքսանդրի պատմությունը», այլև գաղափարական ունեւն ունեւն հիմքի վրա խարսխւած նրա հետևողական գործունեությունը ժամանակին տարածում դոած մեկ այլ զրույցի՝ «Պղնձե քաղաքի պատմության» առնչութեամբ: Պարզվում է, որ միջնադարյան զրույցների հետ Գրիգորիս-Աղթամարցու ստեղծագործական առնչությունները գրեթե ունեւն ուղիով են ընթացել, կրելով արծակ բնագրերի ստուգման և սրբագրման, հին կաֆաների տաղաչափական մշակման և նորաստեղծ սեփական կաֆաների ներմուծման բնույթ: Համոզվելու համար բավական է համագրել թեկուզ Աղեքսանդրի և Պղնձե քաղաքի համապատասխան գրիգորիսյան հիշատակարանների հաղորդած մեծարժեք տեղեկություններն այդ մասին²⁰:

Աղթամարցու գործունեության շնորհիվ «Պատմության» մեջ մի նոր շերտի գոյացումն ունի, անկասկած, իր պատմական ակունքները և խորհրդանշում է միջնադարի հայ դրականության մեջ նոր տրամադրությունների ու ազդակների երևան գալը, որոնց հիմքում ըստ էության ընկած է մարդ-անհատի նկատմամբ օրավուր աճող հետաքրքրությունը: Իսկ բանաստեղծի կողմից՝ հին, մասնավորապես կեղծագրական կաֆաների խմբագրումը՝ տաղաչափորեն միասնական տեսքի բերելը և նոր սեփական 48 կաֆաների հորինումը պետք է դիտել իբրև նշանակալի առաջընթաց ոչ միայն «Պատմության» հայկական թարգմանության, այլև առհասարակ հայ միջնադարյան բանաստեղծության համար:

Հեղինակը, արդեն հաստատված ավանդույթով անաղարտ թողնելով բնագիրը, կաֆաների միջոցով նկատելի փորձեր է անում անձնավորելու «Պատմության» միադրժ հերոսներին, կառուցելու ամբողջական կերպարներ: Ընարուն անհատականություններ, որով և ստեղծագործությանը հաղորդելու հուզական ավուն ու վիպական մթնոլորտ: Ուստի, եթե Կեղծագրի կատարեց գրեթե ստեղծագործությունը սեփական ընթերցողի պահանջներին հարմարեցնելու անդրանիկ համարձակ քայլերը, ապա Աղթամարցու գործունեությունը կարելի է բնութագրել իբրև, մի կողմից, կեղծագրական ավանդների շարունակում և խորացում, մյուս կողմից, հայկական իրականության հարուցած խնդիրների, ազգային ու սոցիալական բաղձանքների ինքնահատուկ բեկում օտար հուշարձանի պարտադրած թեմաների մեջ: Եվ պատահական չէ, որ «Պատմության» ձեռագրերի մեծ մասը պատկանում է գրիգորիսյան խմբին:

Մեզ է հասել XVI դարի բանաստեղծ Ջաքարիա Գնունեցու գրչից ելած «Պատմության» երկու մեծարժեք, նկարազարդ և կաֆայավոր ձեռագիր: Դրանցից մեկը, ինչպես պարզվեց մեր որոնումների ընթացքում, Մատենադարանի № 5472 ձեռագիրն է, ունեւն հանրահայտ «Սոս օրինակը», մյուսը՝ 1544 թ. կազմած, այժմ Մանչեստրում պահվող օրինակը: Օժտված լինելով գրական-նկարչական ակնառու պրոֆեսիոնալիզմով ու ղեկավարվելով քննական բնագրի կազմման բավական ճիշտ և հետևողական մեթոդով, Ջաքարիան

²⁰ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 5622, էջ 54ր: Հ. Քյուրտյան, Գրիգորիս-կաթողիկոս Աղթամարցի կաֆաները «Պատմություն» մեծի աշխարհակալին Աղեքսանդրու Մակեդոնացու» մեջ, «Հանդես ամսօրյա», 1967, № 10—12, էջ 424: Հ. Սիմոնյան, Հայ-միջնադարյան կաֆաներ, էջ 160—161:

ձեռագրերի համադիր բնությամբ կարողացել է ստեղծել բացառիկ արժե-
յավոր և իր բնույթով ընդհանրական մի օրինակ, որն իր ժամանակին այն-
պիսի մեծ հիացմունք է պատճառել Բալրոնին, որ պոետը ցանկացել է իր
խակ միջոցներով հրատարակել այն, սակայն հանգամանքները խանգարել են
այդ մտադրության իրագործմանը²¹։ Մի շարք փաստեր խոսում են Ջաբա-
րիայի աշխատանքների լայն ընդգրկումների և ինքնատիպության մասին։
Ջաբարիայի՝ «Պատմության» հետ կայուն համակարգ ներկայացնող առնչու-
թյան ավանդական բնույթը հավաստող վկայությունների կողքին գոյություն
ունեն բազմաթիվ փաստեր, որոնք որոշակի հիմքեր են տալիս պնդելու նրա
գործունեության անհամեմատ լայն ընդգրկումների և նորարարական բնույթի
մասին։

Այստեղ մեզ հետաքրքրողը ոչ միայն Ջաբարիայի և նրա նախորդների
երական գործունեության ընդհանուր միտումներն են, այլև առաջին հերթին
այն մեթոդների կիրառությունը, որով վերջինս փաստորեն իրականացրեց
«Աղերսանդրի պատմության» հայկական խմբագրության կառուցվածքային,
ոճական և գաղափարական բյուրեղացումը։ «Պատմության» հայկական վեր-
սիայի նախընթաց փուլերի և հատկապես կեչառեցիական-աղթամարցիական
ձեռագրերի հետ Ջաբարիայի ստեղծած օրինակների համադիր-համեմատա-
կան վերլուծության ճանապարհով հստակորեն զատորոշվում է հետագա խմ-
բագրության երրորդ՝ վերջին փուլը։ Այս հողվածի նպատակներից դուրս հա-
մարելով համեմատության արդյունքների մանրամասն նկարագրությունը,
բավարարվենք ընդհանուր եզրակացությամբ։

Հավատելիակ իր մեծ նախորդների և ուսուցիչների՝ Կեչառեցու և Աղ-
թամարցու գործունեության համապատասխան ոլորտներին, համակված
մղումների և գործելակերպի նույն ըմբռնումով և ձեռքի տակ ունենալով
հրանց ստեղծած լավագույն օրինակները, Ջաբարիան շարունակում և վեր-
նական ավարտի է հասցնում հետագա խմբագրության ավելի քան երեքշա-
րուրամյա ստեղծագործական պատմությունը։

Արդ, XIV—XVI դդ. «Պատմության» հետագա խմբագրությունը ձեռք է
բերում մի պատկառելի կենսագրություն՝ սկզբնավորման և ծավալման հա-
ջորդական փուլերով, որը միանգամայն համընթաց է եղել հուշարձանի ա-
տիճանական հայացման պրոցեսին։

Ի վերջո նկատենք, որ երկու խմբագրությունների (նախնական և հետա-
յա) միջև գոյություն ունեցող տարբերությունը տիպաբանական է և բավա-
կան նշանակալի։ Այդ տարբերությունն ըստ էության արտացոլում է ժանրի
անցած ուղին միջնադարում տարածված հնամենի զրուցատիպ երկից դեպի
նոր տիպի՝ վրպա-քնարական բնույթի յուրատեսակ ստեղծագործություն, որն
արդեն ինչ-ինչ եղրերով (վիպական միջնուրոտ, անհատականացման փորձեր
և այլն) կանգնած էր վեպի, իբրև ժանրի, նախաշեմին։

Նոր՝ հետագա խմբագրությունը, գաղափարական և ոճական ոլորտներն
ընդգրկող և նրա հիմնական ստեղծողների՝ հաշատուր Կեչառեցու, Գրիգորիս

²¹ Խոսքը վերաբերում է Սոո օրինակին, որին Բալրոնը ծանոթացել է Վենետիկի Ս. Ղա-
զար կղզում եղած ժամանակ։ Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, Տիրայր վարդապետի
արխիվ, թղթ. № 118, վավ. № 1ա, էջ 66։

Այլթամարցու, Ջաքարիա Գնունեցու ու նրանց եռանդուն աջակիցների ու համախոհների՝ Հովասափ Սեբաստացու, Մարգարե Արճիշեցու, Հակոբ Զուղալեցու և այլոց միասնական մտահղացումով շաղկապված «կոմպլեքսային» խմբագրություն է²²։ Վերջիններիս գործունեությունը տվյալ դեպքում դրսևավորման իր եղանակով եղել է համատեղ, միասնական աշխատանք և կրել է հաջորդական փոխանցման, ժառանգորդականության գծեր։

Թարգմանական երկի աստիճանական տեղաշարժման հետաքրքրական եղանակի գոյություն մասին կարող է վկայել XVI—XVIII դդ. ստեղծված ձեռագրերի մի խումբ, որն իր յուրահատուկ գծերով առանձնանում է «Պատմության» հետագա խմբագրության օրինակների մեջ։ Այն առատորեն հետևելով է կաֆաներով և արձակ հավելումներով, սակայն բուն բնադիր խիստ համառոտած է ի հաշիվ ընդարձակ օրինակներում առկա բազմաթիվ նկարադրությունների, նամակների, ուղերձների և այլնի կրճատման կամ զեղչման։ Քանի որ համառոտումը հետապնդել է սոսկ ծավալային նպատակներ, իսկ բնագրային փոփոխություններն իրենց բնույթով մեխանիկական են, հետևաբար այն նախորդների նման խմբագրություն կոչվելու հիմքեր չի տալիս։ Կաֆաները՝ հայկական տարրի հիմնական կրողները «Պատմության» մեջ, ինչպես գիտենք, առհասարակ շափաժո հարասություններ, ընդմիջարկություններ են, որոնք հորինվածքային միջամտություններ չկատարելով բուն բնագրում, զուգահեռաբար հարստացրել, մեկնաբանել են այն։ Համառոտ օրինակներում, սակայն, կաֆաները, գրավելով կրճատված կամ զեղչված արձակ հատվածներն՝ տեղը, նոր լրացուցիչ նշանակություն են ստացել՝ դառնալով բնագրի սյուժետային գծի կրողները, նրա անկապտելի օղակները։ Մինչև օրս մասնագետները անուշադրությամբ են անցել մեր կարծիքով այն կարևոր փաստի կողքով, որ անհայտ համառոտողի գրչի տակ նման եղանակով ի վերջո «Պատմության» մեջ սեփականը՝ աղգայինը, տիրապետող և ավելի հաստատուն է դարձել, թեպետ, իհարկե, անհաջող համառոտման հետևանքով բնագիրը որոշակիորեն տուժել է։

Համառոտ օրինակներից կարելի է նշել Մատենադարանի № № 1442, 1781, 1782, 3387, 3981, 8031, 8003, Վիեննայի Մխիթարյան մատենադարանի № 706, Լենինգրադի Սալտիկով-Շչեգրինի անվան հանրային գրադարանի Арм. Н. С. № 38, Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի № 1080 ձեռագրերը։ Նման մի ընտիր նկարադարձ օրինակ է Բեռլինի Ազգային գրադարանի № 805 ձեռագիրը, ստեղծված XVI դարի նշանավոր բանաստեղծ Հովասափ Սեբաստացու կողմից։

Արդ, եթե վերը ներկայացված խմբագրությունները վկայում են «Պատմության»՝ իրրեզրական հուշարձանի կյանքը ձեռագրական աշխարհում, ապա երկու օրինակներ՝ Մատենադարանի № 7993 և 6488, խոսում են նրա տարածման և հարատևման բանավոր ուղու մասին։ Բանավոր երկար կյանք անցած ժողովրդական այս ուրույն տարբերակը, հիմքում ունենալով Կեղծ-Կալիսթենեսի երկը, «Պատմությունը» ներկայացնում է ժողովրդական հեքիաթի կամ փոքրածավալ զրույցի ձևով, որտեղ արձակ շարադրանքը սովոր-

²² Այս բնութագրությունը վերցնում ենք ակադ. Գ. Լիխաչովի «Текстология. Краткий очерк». (М., 1964, էջ 13) գրքից։

բարբար հերթագայվում է գողտրիկ քառյակներով-երգերով: Նրա ողջ հորինվածքը՝ ծավալի սեղմությունը, լեզվառճական ատաղձը, կաֆաների ինքնատիպ՝ քառյակային բնույթը, ժողովրդական զրույցների, առակների նմանությունամբ խրատական-բարոյախոսական բնույթի եղրափակող հատվածի առկայությունը և այլ փաստեր խոսում են վերջինիս բանավոր մշակման մասին: Մանավանդ որ ձեռագրերից մեկի՝ № 7993-ի գրիչ ներսես երեց Մեսրոպյանը «Պատմությանը» կցած իր մեծարժեք հիշատակարանում հատկապես շեշտում է այն հանգամանքը, որ ինքն այն լսել է (և ոչ կարդացել): Իսկ կաֆաները նրան բերանացի հաղորդել է Պուղտանա երկրից իր մոտ հյուրնկալված Անդրեաս արքեպիսկոպոսը, որը, դարձյալ գրչի հավաստմամբ, «իշյալ «ոտանաւորքս ուսեալ էր ի մանկութեան իւրում և ի բերան սերունդնէր»²³: Ժողովրդականացած այս տարբերակը, որն առանձին քննությանն չյուրթ է, իր բանավոր կյանքը սկսելով համեմատաբար վաղ ժամանակներում, հետագայում կրկին վերադարձել է ձեռագրերի աշխարհը և դրի առնվել ոչ ուշ, քան XVI դարը²⁴:

Այսպիսով, Կեղծ-Կալիսթենեսի «Պատմություն Աղեքսանդրի Մակեդոնացու» երկը հայկական միջավայրում շարունակել է իր գոյությունը, հրդկվելով, հարստանալով և վերաիմաստավորվելով շուրջ 1500 տարի: Բարդ, ինքնատիպ հորինվածքը, գաղափարական նպատակաւաղությունն ու ազդային ոգին նրան դնում են միջնադարի նշանավոր գրական հուշարձանների շարքը:

АРМЯНСКИЙ ПЕРЕВОД «ПОВЕСТИ ОБ АЛЕКСАНДРЕ МАКЕДОНСКОМ» И ЕГО РЕДАКЦИИ

А. А. СИМОНЯН

(Резюме)

Армянская «Повесть об Александре Македонском», датируемая V веком, является одним из древнейших и совершеннейших переводов сочинения светского содержания в древнеармянской литературе. Предполагаемый автор перевода — отец армянской исторнографии Мовсес Хоренаци, одним из источников «Истории Армении» которого был греческий оригинал «Повести». Армянский перевод «Повести» отражает древнейшее состояние оригинала (в alexandрийской редакции) и дает представление о ряде бесследно исчезнувших и попорченных отрывков греческого текста.

Комплексное изучение списков показало, что за полуторатысячелетнюю творческую историю своего бытования в Армении «Повесть» прошла два основных этапа развития. Первый этап (V—XIV вв.) совпадает с периодом существования первоначальной армянской редакции, списков

²³ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. № 7993, էջ 258բ—259ա:

²⁴ Ավելի ուշ՝ XVIII—XIX դդ. ստեղծված ժողովրդական մի այլ տարբերակի հանդիպում ենք Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքի մատենադարանի № 597 ձեռագրում (1842 թ.): Տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարանի № 575 մանրածապավենը:

которой представляют раннее состояние текста без армянских интерполяций и национальной адаптации. Выяснилось, что протографом всех списков первоначальной редакции является рук. Матенадарана им. Маштоца № 10151 (XIII в.) — древнейший из известных нам списков. С XIII—XIV вв. начинается второй, основной этап развития «Повести», совпадающий с формированием позднейшей редакции. Новая редакция имеет комплексный характер и включает в себя идеологические и стилистические сферы, объединенные замыслом ее составителей. Сопоставление списков позднейшей редакции и их разночтений позволяет говорить о наличии в ней трех слоев, образовавшихся в XIV—XVI вв. в результате редакторской деятельности Хачатура Кечареци, Григориса Ахтамарци и Закарии Гнунечи и составляющих целостную систему (кафы—стихотворные интерполяции, редактирование текста, миниатюры и др.).

Различия между двумя редакциями имеют типологический характер и отражают путь жанра от старинной повести, сказания до своеобразного лирико-эпического произведения, в некоторых отношениях уже стоящего в преддверии жанра романа. Ряд списков свидетельствует о существовании фольклорного варианта «Повести».